№ 7 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 15 **1899** ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 15 № 7

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ **1899** ԹԻՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կարտրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտենալ հետևեալ հասցէները. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարություններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տնտեսական ճգնաժամի պատճառները. Մամուլի կարծիքը Նուբար փաշայի մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսումը թուրքերի մէջ. Մամուլ. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիշերելու ապաստարաններ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

—

Խօսելով անցեալ անգամ Ռուսաստանի գիւղական ազգաբնակութեան տնտեսական ճգնաժամի մասին, մենք տեսանք, որ Ֆինանսների մինիստրը համաձայն չէ այն կարծիքների հետ, որոնք արտայայտվում են մամուլի և հասարակութեան մէջ այդ երևոյթի հիմնական պատճառների մասին։ Տնտեսական ճգնաժամի արմատական պատճառը, մինիստրի համոզմունքով, «գիւղացիների կալուածական և հասարակական յարաբերութիւնների անորոշութիւնն է, որ բազմատեսակ դժուարութիւններ է ծնեցնում և թոյլ չէ տալիս գիւղացուն վարել անձնական տնտեսութիւնը, տնօրինել իր ոյժերը և միջոցները. այդ անորոշութիւնը առաջ է գալիս գիւղացիների մասին եղած օրէնսդրութեան անկատարութիւնից և այն հանգամանքից, որ այդ օրէնսդրութիւնը չէ համապատասխանում ժողովրդի պահանջներին և չէ հաստատում իրաւունքի մի հաստատ կարգ։

Ուրեմն, Ֆինանսների մինիստրի կարծիքով, գիւղական ազգաբնակութեան կրած տնտեսական աղէտների և պարբերական անբերրիութեան հիմնական պատճառները պէտք է որոնել ոչ թէ հարկերի ծանրութեան, գիւղացու տգիտութեան, կրթական յետամնացութեան մէջ, այլ հաստատ և որոշ օրինական կարգի բացակայութեան մէջ, որովհետև այդ դրութիւնը թոյլ չէ տալիս գիւղացուն լուծել ամեն օր ծագող անձնական, ընտանեկան և կալուածական յարաբերութիւնների բազմաթիւ վէճերը։

Չէ կարելի, ի հարկէ, չը համաձայնվել մինիստրի հիմնաւոր կարծիքի հետ, թէև անկարելի է համարել այդ կարծիքը իբրև տնտեսական ճգնաժամի միակ արմատական պատճառը։ Թէ Ռուսաստանում և թէ Կովկասում գիւղական ազգաբնակութեան համար գոյութիւն ունեցող գործադիր օրէնսդրութիւնը շատ անկատար, թերի և անորոշ է և գիւղական ժողովուրդը իր հասարակական, ընտանեկան, իրաւական հարցերը և վէճերը պէտք է լուծի սովորութիւնների, ադաթների հիման վրա։ Եւ ուրեմն անկասկած է, որ այնտեղ, ուր չը կայ որոշ, հաստատ օրէնք, կարգ, ուր մարդիկ ղեկավարվում են աւանդութիւններով, սովորութիւններով, այսինքն առաձգական կանոններով, որոնց կարելի է այս և այն մեկնութիւնը տալ, այնտեղ ոչ մի ապահովութիւն չը կայ՝ թէ իրաւունքը, արդարութիւնը յարգված կը լինի միշտ և գիւղական ժողովրդի իրաւացի, օրինական շահերը պաշտպանված կը լինեն։ Աւանդութիւնները, առաձգական, անորոշ սովորութիւնները, որոնց մեծ մասը փտած հնութեան, միջնադարեան հասկացողութիւնների ծնունդ են, կարող են միշտ դէնք լինել ճարպիկ, շահասէր մարդկանց ձեռքում և հարստահարութեան առաջ լայն դուռը բանալ։ Այդպէս էլ եղել է, և այդ կարգից սաստիկ ենասվում է գիւղական ժողովուրդը։

Այդ կողմից, ինչպէս միաձայն վկայում է ռուսաց մամուլը, Ֆինանսների մինիստրի ցուցմունքը ահագին նշանակութիւն է ստանում. նա ապացուցանում է պետական մի խոշոր անկազմակերպութիւն, և ցոյց է տալիս, որ մի ամբողջ, այն էլ ազգաբնակութեան հսկայական մեծամասնութիւնը կազմող դասակարգ կտրված, առանձնացրված է այն քաղաքակրթական բարիքներից, որ վայելում է ազգաբնակութեան փոքրամասնութիւնը։ Սովորութեան, իբրև հնացած, մաշված սկզբունքի իշխանութիւնը այլ ևս չը պէտք է ղեկավարէ գիւղական ժողովրդին, այլ վերջինիս վերաբերմամբ պէտք է գործադրվեն 1861 թ. փետրվարի 19-ի դատաստանական բէֆորմների հիմնական գաղափարները, և ժողովրդական սովորութիւնները պէտք է յարմարեցնվեն այդ հիմնական գաղափարներին։ Մի խօսքով «օրէնքը պէտք է հաւասար լինի ամենքի համար»։ Եւ քանի որ ինքն մինիստրը անհրաժեշտ է համարում գիւղական օրէնսդրութեան վերանորոգութիւնը այն մտքով, որ սահմանվի որոշ, հաստատ կարգ և օրէնք, ոչ մի տարակոյս չը կայ, որ 1861-ի օրէնսդրութեան ոգուն յարմարեցրած գիւղական օրէնսդրութիւնը արմատական բարւոքում առաջ կը բերի գիւղական ազգաբնակութեան վիճակի մէջ։

Մի կողմից հաստատ, որոշ կարգ ու կանոնի գոյութիւնը, միւս կողմից կրթութեան, ուսման լայն տարածումը,—ահա այն արմատական միջոցները, որոնցով կարելի է բարւոքել գիւղական ժողովրդի տնտեսական վիճակը։

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ՆՈՒԲԱՐ-ՓԱՇԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Եւրոպական մամուլն արդէն սկսել է իր կարծիքը յայտնել Նուբար փաշայի և նրա քաղաքական ու հասարակական գործունէութեան մասին։ Ահա ինչ է գրում ֆրանսիական «Temps» լրագիրը.

«Նուբար փաշայի մահը զրկում է Եգիպտոսին նրա կիսա-անկախութեան ամենահաւատարիմ, եթէ չասենք ամենավերջին նեցուկից։ Նուբարի մահը անհետացնում է աշխարհի տեսարանից մի մարդու, որի արտակարգ գործունէութիւնը, միացած այն բնածին ճարպիկութեան հետ, որ նրա ցեղական յատկութիւնն էր կազմում, կարողացաւ տասն տարուց աւելի յետաձգել երկրի վարչական կլանումն։ Նուբար փաշան դուցէ սխալվեց այն եղանակի մէջ, որով պէտք էր ծառայել Եգիպտոսին, դուցէ սխալվեց եգիպտական ինքնավարութիւնը պաշտպանելու միջոցների մէջ։ Նա երևակայեց, որ կարող է անգլիական դրաման միջոցով խոյս տալ «վարչական դրաումից», ինչպէս ինքն էր ասում։ Բայց պատմութիւնը կասի, որ նա եղաւ միաժամանակ վերջին կէս դարի կիսա-անկախ Եգիպտոսի և հիմնադիրը և ամենամեծ պաշտպանը։ Այդ է նրա դերը արտաքին քաղաքականութեան մէջ։

«Ներքին քաղաքականութեան մէջ նա միայն մի միտք ունէր, բայց դրանից էլ աւելի մեծ միտք չը կայ, այն է՝ հիմնել և ապահովել արդարադատութեան թագաւորութիւնը։ Դատաւորներով և օրէնքներով, ասում էր նա յաճախ, մենք կը փրկենք այս երկիրը։ Եւ հէնց Եգիպտոսին դատաւորներ և օրէնքներ տալու, դէպի այդ դատաւորները և օրէնքները Նեղոսի ափերում ապրող բազմաթիւ ցեղերի, ժողովուրդների և խառն դաւանութիւնների յարգանքն ապահովացնելու նպատակով էր, որ նա ձեռնարկեց և իրագործեց իր կեանքի ամենամեծ աշխատութիւնը, այն է դատաստանական բէֆորմը։ Եթէ Եգիպտոսը 19-րդ դարի վերջում մի խաղաղ և քաղաքակրթված երկիր է, այդ բարիքը նա պարտական է ոչ այնքան աշխարհակալների քաղաքականութեան, որքան Նուբար-փաշայի վարչական գործունէութեան։ Այդ պատճառով Նուբարի կարծիքը ամենաստորինը այն է, որի վրա կանգնած են անգործները, նրանք որոնք սովորական խօսակցութեան մէջ կոչվում են ռուսերէն «босая команда»։ Ահա, սրանք են ապաստարաններում գիշերողները, սրանք են թափառում «по полямъ, по дорогамъ, по тюрьмамъ, по острогамъ»։ Սրանք են ընդհանուր զրկանքի, արհամարհանքի, ամեն տեսակ կենսական դառնութիւնների զոհերը։

Դեկտեմբերին, մի ցուրտ երեկոյ, ես իմ շտապ քայլերը ուղղեցի դէպի Վէրայի «գիշերելու ապաստարանը»։ Ես թէև ոչ մի անգամ չէի եղել այդտեղ, բայց գիտէի ընդհանրապէս, որ Թիֆլիսում երեք «գիշերելու ապաստարան» կայ՝ մէկը Վերայում, միւսը Դիդուբէյում, երրորդը VI քաղաքամասում։ Գիտէի նոյնպէս, որ վերջին երկու ապաստարանները պահվում են քաղաքային վարչութեան հաշուով, իսկ Վէրայինը պահում են մասնաւոր մարդիկ... Սակայն այդ հանգամանքները ինձ այնքան չէին հետաքրքրում. ինձ հետաքրքրում էր, առհասարակ, հիմարկութիւնը իր գաղափարով, իր գործնական հետևանքներով։ Վերջապէս ես հասայ Վերայի «գիշերելու ապաստարանը» և ուղղակի ներս մտայ։ Իմ առաջ բացվեց մի ընդարձակ շինութիւն, որ շատ նման էր գոմի. լուսամուտները առաստաղին մօտ, յատակը հողից, պատերը այնքան խոնաւ, որ ջրի կաթիլներ էին թափվում ամեն կողմից։ Ապաստարանի երկարութեամբ շինված էին միմեանց հանդէպ երկու մեծ թախտեր, երկյարկանի, որոնց վրա պառկոտած, նստոտած էին տեսակ-տեսակ մարդիկ։ Դրան մօտ, պատի առաջ, զրված էր մի կեղտոտ սեղան, փոքրիկ լամպայով, որի լոյսը աղօտ ու ախուր ճառագայթներով լուսաւորում էր չորս կողմ կանգնած հետաքրքիր, տարօրինակ դէմքերը։

Գիշերողներից մէկը սեղանի մօտ նստած գրում էր ներս մտնողների անունները և ազգանունները, ստանում էր մի մի կոպէկ և թոյլ էր տալիս՝ իրանց համար տեղ գտնելու թախտերից մէկի վրա։ Թէև դեռ ժամը 8-ն էլ չը կար, բայց ապաստարանում արդէն 40-ից աւել մարդ կար, որոնց թէ շնչառութիւնից և թէ մարմնի տաքութիւնից՝ բաւական տաքացել էր բնակարանի օդը։ Թամբաքուի խիստ ծուխը լցված էր օդի մէջ և այդպիսով աւելի թանձրացնում էր չորս կողմ տիրող մթութեան մառախուղը։ Անկարելի էր տեսնել ներկայ եղողների դէմքերը, որոնք ճրագի լոյսից հեռու էին. մթութեան մէջ՝ հեռուից լսվում էին նրանց խօսակցութեան ձայները. շարժումները, ստուերների նըման, խառնվում էին միմեանց և այդպիսով ըստ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՇԵՐԵԼՈՒ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐ

—

Դժուար է, ծանր է գրել կամ խօսել այն մարդկանց մասին, որոնց թշուառութեանը չես կարող կարեկցել, որոնց դարդերին չես կարող դարման անել։ Դժուար է գրել՝ աղքատութեան վերջին սահմանին հասած դասակարգի մասին, նկարագրել նրա դրութիւնը, պատմել նրա կարիքը, նրա վիշտը, նրա տանջանքները...

Թիֆլիսը մեր երկրի ամենամեծ և մարդաշատ քաղաքն է. յայտնի է իր գեղեցկութիւնով, իր զուարճալի և ուրախ կեանքով։ Շատ վայելքներ, շատ բաւականութիւններ կան Թիֆլիսում, բայց, ափսոս, որ այդ կեանքի քաղցրութիւնները ամենքի համար չեն, ափսոս, որ մի կողմից փայլի, շռայլութեան, զեղխութեան բարձր աստիճանին հասած Թիֆլիսը՝ միւս կողմից իր յետընկած, կեղտոտ անկիւններում՝ թշուառութեան, կարիքի, սովի ու ցրտի անթիւ զոհեր է պարունակում։ Ո՞ր մէկն ասել, որ մէկը պատմել...

Ով ուզում է ծանօթանալ Թիֆլիսում գոյութիւն ունեցող աղքատութեան հետ, ով որ հետաքրքրվում է խեղճերի, անտէր-անտիրական մնացածների կեանքով, թող մի օր նեղութիւն քաշէ և այցելէ տեղիս «գիշերելու ապաստարանները»։

Այստեղ անսովոր աչքի առաջ կը բացվի մի սրտաճմլիկ, մի յուսահատեցնող տեսարան և ես, որքան էլ որ սովոր եմ նեղութեան ու զրկանքի, որքան էլ որ ծանօթ է ինձ աղքատութեան դառնութիւնը իր ճնշող հետևանքներով՝ դարձեալ չը կարողացայ անտարբեր կերպով նայել իմ առաջ բացված՝ կեղտի, ցնցոտիների, սովի ու ցրտի մէջ դեգերող մարդկանց կեանքին։ Մարդ իր սեփական նեղութիւնը, իր սեփական ցաւն ու վիշտը մոռանում է, երբ տեսնում է ուրիշի աւելի մեծ վիշտը, աւելի մեծ նեղութիւնը և կարիքը։ Մի քանի օր շարունակ այցելելով տեղիս «գիշերելու ապաստարանները» ես առիթ ունեցայ ականատես լինելու մարդկային ծայրայեղ թշուառութեան, առիթ ունեցայ տեսնելու, չուսումնասիրելու հասարակական ցաւերից ամենամեծը, ամենաչարը։

Պրոլետարիատ կոչվում է՝ իր աշխատանքով ապրող, սեփականութիւն չունեցող դասակարգը։ Սակայն այդ դասակարգի մէջ շատ աստիճաններ ու բաժանումներ կան, որոնք մտաբերապէս խիստ զանազանվում են միմեանցից։ Այդ աստիճաններից ու բաժանումներից ամենաստորինը այն է, որի վրա կանգնած են անգործները, նրանք որոնք սովորական խօսակցութեան մէջ կոչվում են ռուսերէն «босая команда»։ Ահա, սրանք են ապաստարաններում գիշերողները, սրանք են թափառում «по полямъ, по дорогамъ, по тюрьмамъ, по острогамъ»։ Սրանք են ընդհանուր զրկանքի, արհամարհանքի, ամեն տեսակ կենսական դառնութիւնների զոհերը։

Դեկտեմբերին, մի ցուրտ երեկոյ, ես իմ շտապ քայլերը ուղղեցի դէպի Վէրայի «գիշերելու ապաստարանը»։ Ես թէև ոչ մի անգամ չէի եղել այդտեղ, բայց գիտէի ընդհանրապէս, որ Թիֆլիսում երեք «գիշերելու ապաստարան» կայ՝ մէկը Վերայում, միւսը Դիդուբէյում, երրորդը VI քաղաքամասում։ Գիտէի նոյնպէս, որ վերջին երկու ապաստարանները պահվում են քաղաքային վարչութեան հաշուով, իսկ Վէրայինը պահում են մասնաւոր մարդիկ... Սակայն այդ հանգամանքները ինձ այնքան չէին հետաքրքրում. ինձ հետաքրքրում էր, առհասարակ, հիմարկութիւնը իր գաղափարով, իր գործնական հետևանքներով։ Վերջապէս ես հասայ Վերայի «գիշերելու ապաստարանը» և ուղղակի ներս մտայ։ Իմ առաջ բացվեց մի ընդարձակ շինութիւն, որ շատ նման էր գոմի. լուսամուտները

բար փաչան կարող էր ընտրել իր մահարձանի համար մի արձանագրութիւն, որ ձևակերպում է նրա ամբողջ կեանքը. «Առանց արդարադատութեան ամենևին կառավարութիւն չը կայ»:

Ապա հաղորդելով կենսագրական տեղեկութիւններ հանգուցեալի մասին, որոնք արդէն ծանօթ են մեր ընթերցողներին և ցոյց տալով, որ Նուբար փաչան թէև 1894 թվին վերստանձնեց Եգիպտոսի վիճիսար-նախագահի պաշտօնը, բայց ստիպված եղաւ չուտով հեռանալ գործից՝ թէ իր խախտված առողջութեան և թէ այն պատճառով, որ նա իրան անզօր էր զգում իրագործել իր երազը, այն է անկախ Եգիպտոսի գաղափարը օտար նիզակների տակ,—ֆրանսիական լրագիրն աւելացնում է.

«Բայց նրա գլխաւոր գործը մնում է: Արդարադատութիւնը թագաւորում է Եգիպտոսում: Նուբար փաչայի վերջին տարիները լի էին տանջանքներով. ֆիզիկական տանջանքների հետ նա կրում էր և բարոյական ծանր տանջանքներ Հայաստանի աղէտալի դէպքերի պատճառով: Նուբար փաչան ոչինչ չը խնայեց մեղմացնելու համար, որքան կարող էր, իր ազգի թշուառութիւնները: Իր սեփական վախճանի տխրութիւնների մէջ, նա յաճախ վչտի աղաղակներ էր արձակում, լսմանալով հայերի կրած տառապանքը և կարելի է ասել, որ նա բարոյապէս խաչվում էր իւրայինների հետ: Անկասկած, նա մեր դարի պետական մեծ մարդկանցից մէկն էր. մի ժամանակ նրան անուանում էին Արևելքի Կավուր, բայց նա սիրում էր, որ իրան անուանէին արդարադատութեան ախոյեան Եգիպտոսում»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՔ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԷՋ

Մինչդեռ Բագուի թուրք ազգաբնակութիւնը, չնորհիւ այնտեղի արդիւնաբերութեան զարգացման և ռուս ու հայ ազգութիւնների մասաւոր շարժումների, առաջադիմութեան զգալի քայլեր է անում, մի կողմից հոգ տանելով դպրոցական գործի վրա, միւս կողմից հիմնելով գրադարան-ընթերցարաններ, թատրոն և այլ հասարակութիւններ,—Կովկասի բազմաթիւ թուրքերը ընդհանրապէս և Երևանի նահանգինը մասնաւորապէս, առաջադիմութեան ոչ մի նշոյլ չեն ցոյց տալիս. ընդհակառակը, նրանք այսօր ներկայացնում են այն, ինչ որ էին 50—100 տարի առաջ: Այս տխուր երևոյթը որքան անմիջական կերպով ազդում է թուրքերի մասաւոր և բարոյական ընդունակութիւնների վրա, նոյնչափ էլ, թէև անուղղակի կերպով, ազդում է նաև Կովկասի միւս ժողովուրդների, նոյնպէս մեզ՝ հայերիս վրա: Ահա թէ ինչու մեր շանը նոյնպէս պահանջում է անուշադիր չը թողնել մեր դրացի թուրք ազգաբնակութեան այդ պակասաւոր կողմը:

Երևակայեցէք որ, ինչպէս շատ տեղեր, այնպէս էլ Երևանում, հայերի և թուրքերի—այդ երկու՝ դարերով միմեանց հետ ապրած և փոխադարձաբար միմեանց վրա ազդած դրացի ազգութիւնների մէջ չը կայ ոչ մի բարոյական կապ, դրացիական յարաբերութիւն: Այդ բաւական չէ, եղել է երբեմն, որ այդ երկու ազգութիւնների մէջ տեղի են ունեցել նոյն իսկ արիւնահեղ ընդհարումներ, ինչպէս 1885 թուի յունվարի 5-ի Երևանի ցաւալի դէպքը: Այս բոլորը մենք վերագրում ենք այն բանին, որ թուրքերը, հեռու մնալով կրթութիւնից և լուսաւորութիւնից, կաշկանդված լինելով կրօնական նեղսիրտ և եսական աշխարհահայեացքներով՝ առելութեամբ և թշնամաբար են վերաբերվում դէպի այլադաւանները:

Երևանը նահանգական քաղաք է, 12—14 հազար թուրք ազգաբնակութեամբ. բայց թուրքերը ոչ կանոնաւոր դպրոց ունեն, ոչ թատրոն, ոչ գրադարան-ընթերցարան, ոչ գրավաճառ, և ոչ նոր գրքեր. նրանց ընթերցանութիւնը դեռ ևս պատում է կրօնական գրքերի շուրջը: Այսպէս է քաղաքը. ապա գիւղը, գաւառացի թուրք ազգաբնակութիւնը: Գաղափար կազմելու համար առաջ կը բերենք մի փաստ:

Նախիջևանի գաւառի Մ. գիւղում պօլիցիայի ջանքերով բացվում է ժողովրդական դպրոց: Ի հարկէ, այդ բանին հակառակ են լինում թուրքերը, թէև բացարձակ կերպով չեն վստահանում հակառակել, և երբ պրիստաւի առաջարկութեամբ դպրոց են հրաւիրվում նաև թուրք երեխաները, ծնողները այդ բանից ազատվելու համար դիմում են մի շատ ընդունված միջոցի, այն է՝ առաջարկում են ուսուցչին կաշառք, որպէս զի ուսուցիչը զանազան պատճառներով չընդունի նրանց որդիներին: Այդ բանը նրանց չէ աջողվում, բայց և այնպէս այդ դպրոցում հայ երեխաների թիւը անհամեմատ շատ է, քան թուրքերինը, չը նայած որ գաւառում 20 թուրք գիւղերի հետ միմիայն մէկ թէ երկու հայ գիւղ կայ: Այս մի հատիկ փաստը բաւական է դաղափար կազմելու համար թէ թուրք գիւղացի ժողովուրդը որքան խորշում է ուսումից: Եւ մենք բացառապէս այսպիսի խորշումը և թիւր հասկացողութիւնը կրթութեան նկատմամբ համարում ենք պատճառ այն անվերջ թայֆայական կռիւների և արիւնհեղութիւնների, այն կողոպուտների և աւազակային ապատակութիւնների, որոնք շատ սովորական երևոյթներ կարդն են անցել մեր դրացի թուրք ազգաբնակութեան մէջ: Աւազակութիւնը խրախուսվում, պաշտպանվում և քաջագործութիւն է համարվում գլխաւորապէս այն տեղերում, ուր ուսման մի նշոյլ անգամ չէ թափանցում խաւար հասկացողութիւնների ներսը:

Այսպիսի աշխարհահայեացք ցրելու ու դարաւոր խաւարը փարատելու համար հարկաւոր է քաղաքներում հող պատրաստել, ինտելիգենցիա կազմակերպել, որն իր կողմից ուսում և լուսաւորութիւն ժամանէր ժողովրդի մէջ: Բայց ցաւը նրանումն է, որ այդպիսի շարժում Երևանի պէս քաղաքում անգամ գոյութիւն չունի: Ինտելիգենտ մարդիկ, ճիշդ է, կան մի քանի հատ, բայց նրանք այժմ էլ հալածվում են որպէս բաբիներ. լրագիր չէ ստացվում և օրինաւոր լրագիր գոյութիւն չունի, որն իսկապէս պէտք է լոյս ցոլացնէր այս խաւարի մէջ: Թիֆլիսում մի ժամանակ հրատարակվում էր մի լրագիր «Քեչքիւլ» անունով, բայց շատ կարճ կեանք ունեցաւ. այժմ Կրիմում հրատարակվում է կէս թուրքերէն կէս ռուսերէն «Թէրջիման»—«Переводчикъ» լրագիրը, որն իր սահմանափակ և երբեմն նոյն իսկ ստոր ուղղութեամբ հանդերձ շատ քիչ է տարածվում, իսկ նոր ուղղութեան գրքեր բոլորովին չեն տարածվում: Այսպիսի ընթացքով արդեօք առաջադիմութիւն կարելի է սպասել:

Եթէ մեր դրացի թուրք փոքրաթիւ ինտելիգենտների համար թանգ են իրանց ժողովրդի շահերը և մտաւոր, բարոյական զարգացումը, նրանք պիտի միանան ու ղեկավարեն այդ ժողովրդի մտաւոր առաջադիմութեան, այն է դպրոցների, գրքերի ու պարբերական հրատարակութիւնների միջոցով, իւրաքանչիւր տեղում բանալով նոր ձևի դպրոցներ տղաների և աղջիկների համար, հրատարակել ժողովրդական գիտական մատչելի գրքեր և հիմնել մի ամենօրեայ լրագիր: Լրագիր հրատարակելու համար, մեր կարծիքով, ամենայարմար տեղը այժմ Բագուն է, ուր այդպիսի մի ձեռնարկութիւն կը գտնի թէ նիւթական և թէ մտաւոր օժանդակութիւն:

Ե. Տ. Մ.

ՄԱՄՈՒԼ

—

Ցաւանի է, որ ապրող մարդկութեան մէջ լինում են և կենդանի մեռելներ: Ի՞նչպէս է տեղի ունենում այդ զարմանալի երևոյթը: Մէկը մեռնում է, դաւաճանելով հասարակութեան, միւսը—թքելով իր անցեալի վրա, մի երրորդը սպանում է ինքն իրան, կատարելապէս անպէտք, անօգտակար դառնալով այն ուղղութեան, այն դաւանանքների վերաբերմամբ, որոնց մէջ մի ժամանակ նա յայտնի է դարձել: Կովկասեան ռուս մամուլը վերջերումս շատ է խօսում մի այդպիսի մեռելի մասին: Դա վրացի հրապարակախօս պ. Նիկոլաձէն է: Այդ անունը մի ժամանակ յարգանք էր վայելում մայրաքաղաքի և կովկասեան ռուս մամուլի մէջ: Նիկոլաձէ հեռևում էր ազատամիտ ուղղութեան և աշխատակցում էր այդպիսի օրգաններում, ուր աշխատում էին Սալտիկով և նրա նմանները: Իր սեփական «Обзоръ» լրագրի մէջ էլ պ. Նիկոլաձէ հետևում էր նոյն ազատամիտ, առաջաւոր ուղղութեան: Բայց այդ մի ժամանակ էր. իսկ ժամանակը, ինչպէս ասում է լատինական իմաստուն առածը, փոփոխական է: Վերջերումս պ. Նիկոլաձէ սկսեց հանդէս գալ... պ. Վէլիչկոի «Кавказъ» լրագրում և իւղ էր քսում նրա հայցին: Թիֆլիսի հինաւուրց լրագրի էջերը «Отечественныя Записки» ամսագրի նախկին աշխատակցին հարկաւոր էին աւելի բանակռիւներ մղելու համար. այդտեղ ահա պ. Նիկոլաձէ ցոյց տուեց որ, իսկապէս, եթէ ժամանակները փոփոխական են, գործիչները հօ աւելի խիստ են ենթարկված այդ օրէնքին: Այդ փոփոխականութիւնը մահ է: Եւ «Новое Обозрѣніе» լրագրի հանդարտելի աշխատակից պ. Իւանովիչ Հիւսիսային Կովկասում հրատարակվող մի լրագրի մէջ գրեց պ. Նիկոլաձէի մահացուցակը: Պ. Նիկոլաձէ, ի հարկէ, կատաղեց և «Кавказъ»-ի մէջ ապեց մի ահագին յօդուած, որի վերնագիրն էր «Ինչպէս մենքը թաղեցին կատուին»: Այդտեղ նա ուզեց ցոյց տալ, որ ինքը իր հակառակորդների վերաբերմամբ կատու է և մենքը չեն կարող թաղել այդ ուժեղ կենդանուն:

Ճիշդ էր: Այդ պատասխանով պ. Նիկոլաձէ ապացուցեց, որ կատուները երբեմն կարող են լինել և կեղծ ատամներով ու թղթի ճանկերով: Եւ ահա նրանք, որոնց պատուելի հոգեւոր մարդիկներ է անուանում, հէնց այդ յօդուածից դուրս են բերում կատուներ, որոնք անկասկած են դարձնում, որ պ. Նիկոլաձէ մի կենդանի մեռել է այն ուղղութեան համար, որին մի ժամանակ նա ծառայում էր և մի նորածին հսկայ—պ. Վէլիչկոի ուղղութեան համար: Դա փաստ է: Ամեն գործողից ազնուութիւն է պահանջվում. շատերն են պ. Նիկոլաձէի նման դաղաղ մտել, բայց գոնէ չեն ծածկել, որ մեռնում են մի ուղղութեան համար, որպէս զի կենդանանան մի ուրիշ ուղղութեան համար: Իսկ պ. Նիկոլաձէ այդ չէ ուզում. մի ոտը դնելով պ. Վէլիչկոի լրագրում, նա միւս ոտը ուզում է պահել այդ լրագրից անյատակ խորխորատներով բաժանված ուղղութեան վրա: Այդպիսի քաջագործութիւն անմատչելի է նոյն իսկ առիւծներին, ուր մնաց աւելի համեստ անասունով և փառքով բաւականացող կատուին...

*

Արտասահմանեան մի լրագրում գտնում ենք հետևեալ ընորոշ փաստը, որ պատկերացնում է Պարոնեանի «մեծապատիւ մուրացկաններ»-ից մէկին:

Կ. Պոլսում հին ժամանակներից հրատարակվում է «Փունջ» անունով մի լրագիր: 1896-ի օգոստոսեան դէպքերից յետոյ, երբ «Արևելք» զոհ դնաց Բիւզանդ Քէչեանի մատնութեան, Կ. Պոլսում միայն այդ «Փունջն» էր, որ Բարթուղիմէոս Զամիչեանի օրգանն էր և մենք այն ժամանակ «Մշակի» մէջ շատ անգամ ցոյց տուինք թէ Նուբեան-Բարթուղիմէոսի տուրքերը որքան զզուելի եռանդ են ներշնչում Համբարձում Աւլաճեան անունով հինաւուրց պնակալէզին, որ «Փունջի» խմբագիր էլ է կոչվում: Ժամանակ անցաւ, Նուբեան-Բարթուղիմէոս երկրորդութիւնը քշվեց հրապարակից և պնակալէզութիւնը «Բիւզանդիոնի» սեփականութիւն դարձաւ: Ինչ անէր խեղճ Աւլաճեան: Ահա ինչ:

Պոլսոյ «Փունջ» լրագիրը, վերջերս Ամերիկայեն ամենալիրը զրպարտութիւններու գլուխ գործոց յօդուած մի հրատարակեց, ուր ի միջի այլոց կրսուէր թէ «Մաշթոց վարդապետ Ուսթերի եկեղեցւոյ սպասները գողցեր, փախչեր և գնացեր ամուսնացեր է»: Պատաւոր ազգայիններէն մին, ինչպէս որ պէտք էր, նոյն թերթի մէջ հերքեց այդ սուտերը, շատ պարզ ու զօրաւոր ոճով մը: Ցիչեալ թերթին խմբագիրը սոյն հերքումն հրատարակելէն ետքը նամակով մը դիմում կընէ յօդուածագիր տօքթէրին և կը խնդրէ որ բարեհաճի Մաշթոց վարդապետէն քանի մը տօղար առնել ղրկել իրեն (խմբագրին) ի վարձատրութիւն հրատարակուած հերքումին:

Հայ մամուլի խայտառակութիւնը հսկայական քայլեր է անում... Աչքերս լոյս...

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Յունվարի 4-ին

Զեմակի տուրքի տեսակէտից Ախալքալաքի գաւառը մինչև այժմ պատկանում էր Թիֆլիսի նահանգի առաջին կարգի գաւառներին և տարեկան վճարում էր 48,045 բուբլի՝ հաշուելով միջին թիւով իւրաքանչիւր ծխից 7 ր. 50 կոպ.: Աչքի առաջ ունենալով, որ գաւառի գիւղական ազգաբնակութիւնը վերջին տարիները տնտեսապէս քայքայվել է և անկարող է առաջին կարգի գաւառների շարքում այդ ահագին տուրքը վճարել,—տեղական հարկային տեսուչ պ. Լ. Ղուկասեան՝ իր մի զեկուցումով՝ բարձր իշխանութեան առաջ պարզաբանել էր գաւառի ազգաբնակութեան տնտեսական դրութիւնը և միջնորդել էր, ուր հարկն է, որ գաւառը զեմստվոյի տուրքի վերաբերմամբ առաջին կարգի գաւառից վերածվի երկրորդ կարգի, որով նշանաւոր չափով թեթևացած կը լինի այդ տուրքը:

տարվում էր ապաստարանի ընդհանուր ներքին տեսարանը:

Սեղանի և ճրագի շուրջը ժողովվածների կերպարանքից ու դէմքից կարելի էր դաղափար կազմել և միւսների մասին: Նրանք բոլորն էլ հատարեա ցնցոտիներով էին պատած՝ երկար, կարճ, հաստ, բարակ հագուստի մաշված, կարկատած, կապկապած մնացորդներով... Մաղերը զզզված, դէմքերը կեղտոտ, այլայլված, տանջված: Իսկ աչքերը... Դժուար է նկարագրել թէ որպիսի բութ, խուլ յուսահատութիւն, որպիսի ապշութեան, չարչարանքի, նեղութեան, սովի ու անտանելի զրկանքների հետքեր էին արտայայտում նրանց տանջված աչքերը... Նրանք բոլորն էլ խօսում էին ռուսերէն. մեծ մասամբ ռուսներ էին՝ նախկին զինուորներ, արհեստաւորներ, զուտ մշակներ, որոնք այժմ զրկված աշխատանքից, զրկված ապրուստի բոլոր միջոցներից՝ օրերն անց են կացնում դուրսը՝ թափառելով տրակտիրների ու խանութների անկիւններում, իսկ գիշերը՝ այստեղ:

Անկողին ասած բանը չէր կարելի գտնել ամբողջ հիմնարկութեան մէջ. շատերը ուղղակի պառկում են չոր տախտակի վրա, ոմանք էլ տակից կամ վրայից գցում են մի հին, կեղտոտ փալասի կտոր. այդ է նրանց անկողինը: Գիշերոցները երևի ամիսներով, գուցէ և տարիներով չեն հանում իրանց վրայից զգեստը. նրանց հագուստը ինքն իրան փտելով, մաշվելով քայքայվում ու թափվում է մարմնի վրայից, և այն ժամանակ միայն մարմինը բացվում է:

Իմ տուած զանազան հարցերին նրանք պատասխանում էին մի տեսակ լարված հետաքրքրութիւնով. երևում էր, որ շատ բան ունէին ասելու... բայց միջոց չը կար նրանցից ամեն մէկին խօսեցնելու, ամեն մէկի զլխից անցածը իմանալու: Բոլորն էլ միաբերան գանգատվում էին անգործութեան վրա, բոլորը սպասում էին, խնդրում էին, աղերսում էին աշխատանք: Նրանցից շատերը «չոր զլուխ» էին. կային և ընտանիք ունեցողներ,—կին, մայր, երեխայ ունեցողներ, միայն այնտեղ, հեռու Ռուսաստանի խորքերում... Գիշերոցների մէջ առանձին հետաքրքրութիւն է շարժում մի բարձրահասակ, բարակ ոտքերով, սև մօրուքով՝ ցնցոտիների մէջ փաթաթված մարդ: Ես նրան ուրիշ անգամ էլ տեսել էի դուրսը, փողոցում: Նա հաւատացնում էր, որ ինքը կապիտան է, Օսիպով է կոչվում, և իմ բոլոր հարցերին թէ՝ ինչպէս է հասել այդ դրութեանը՝ նա չուզեց ոչ մի պատասխան տալ... Միւսները նոյնպէս հաւատացնում էին, որ նա կապիտան է, օֆիցէր... Մի 17 տարեկան պատանի, անտանելի կեղտի ու փալասների մէջ փաթաթված՝ Պետեր Օսմանենկո, հաւատացնում էր, որ 1895 թվին վերջացրել է Թիֆլիսի Նիկոլաեվսկոե դպրոցը, ստացել է ատեստատ, որը և իսկոյն պատռել է: Նա ասում էր, որ ոչ ոք չունի, ոչ մի տեղ չէ աշխատում և օրերն անց է կացնում հատարեա քաղցած... Օրական 2 կոպէկի հաց... ուրիշ ոչինչ: Նա ամբողջ մարմնով դողում, սրբրփում էր կանգնած տեղը: Առհասարակ, ուսուցիչի մասին իմ բոլոր հարցերի պատասխանը կցկտուր, ընդհատվող խօսքեր էին: Երևում էր, որ բոլորն էլ քաղցած են, բոլորն էլ օրական 2 կոպէկի հացով են ապրում... բայց մի և նոյն ժամանակ սովորել, ընտելացել են դրան, ինչպէս որ ընտելացել են իրանց ամբողջ ողորմելի կացութեանը:

Բացի ռուսներից, Վէրայի «գիշերելու ապաստարանում» կային նաև վրացիներ, լեզգիներ, թուրքեր, գերմանացիներ, լեհացիներ: Վերջին ազգութիւնները շատ փոքր տոկոս են կազմում:

Վէրայում տեսածս ու լսածս այնքան խորը տպաւորութիւն արեց ինձ վրա, որ ես երկար ժամանակ չէի կարողանում մոռանալ, չէի կարողանում փարատել մռայլ, յուսահատական մտքերս: Բայց սկսածը պէտք էր շարունակել. պէտք էր մի-մի երեկոյ գնալ տեսնելու նաև «քաղաքային» կոչված վերոյիշեալ երկու ապաստարանները՝ VI քաղաքամասում և Դիդուբէյում:

Չը գիտեմ ով էր ինձ ասել, թէ VI քաղաքամասի «գիշերելու ապաստարանը» գտնվում է ուղղակի Վօրոնցօվսկայա փողոցում՝ ձիաքաշի գծի վրա: Իզուր ես աչքերով որոնում էի այդ փողոցի վրա ապաստարանի դուռը՝ կարծելով թէ ինքս կը ճանաչեմ իսկոյն, առանց ոստիկանի օգնութեան: Բայց դուրս եկաւ, որ իմ փնտռածը ուղղակի այդ փողոցի վրա չէր, այլ պէտք էր ծռվել դէպի աջ, յետոյ դէպի ձախ և այս անգամ միայն նկատեցի բաց դուռը, ներս մտայ:

Սանդուղքից վեր բարձրանալով՝ ես տեսայ մի ընդարձակ պատշգամբ, կարգին լուսաւորված: Պատշգամբին նայում էին մի քանի դուռ և շատ լուսամուտներ: Ես առաջին պատահած դուռը բացի և... իմ աչքերիս չէի ուզում հաւատալ. այդ մի մեծ, կարելի է ասել, գեղեցիկ սենեակ էր, որի մէջ շարված էին 10—15 չափ փայտից շինած և սպիտակ գոյնով ներկած թախտեր: Թախտերի վրա նստոտած էին գիշերողները՝—մեծ մասամբ գաղթական թիւրքահայեր—և ոմանք թէյ խմելով էին զբաղված, ոմանք էլ այնպէս խօսում, զրոյց էին անում: Սենեակը, ուր ես էի գտնվում, բաւական լոյս էր և կարելի էր պարզ տեսնել ներկայ եղողների թէ հագուստը և թէ դէմքերը:

(Կը շարունակվի)

Ուրախութեամբ յայտնում ենք, որ պ. Ղուկասեանի այդ միջնորդութիւնը յարգվել է, և այս սկսվող եռամեակին (1899—1901) մեր գաւառը զեմստվոյի տուրքը պէտք է վճարէ երկրորդ կարգի գաւառների շարքում, այն է՝ 48,045 ռուբլու փոխարէն՝ իւրաքանչիւր տարի պիտի վճարէ 27,022 ռ., միջին թւով ամեն մի ծուխը—4 ռ. 35 կոպ. (փոխանակ 7 ռ. 50 կոպէկի)։ Ուրեմն մեր գաւառը, գոնէ երեք տարի շարունակ, պէտք է իւրաքանչիւր տարի 21,023 ռուբլով պակաս վճարէ, քան մինչև այժմ էր վճարում, որ երեք տարում կը լինի 63,069 ռուբլի։ Դա մեծ թեթևութիւն է գաւառի համար. այդ պատճառով գիւղացիների ուրախութեանը չափ չը կայ։ Չէ կարելի այդ առիթով հրապարակական շնորհակալութիւն չը յայտնել պ. Ղուկասեանին։

Հիմա էլ գիւղերը պէտք է դասակարգերի բաժանվեն. համեմատաբար մնատեսական լաւ պայմաններում գտնվող գիւղերի իւրաքանչիւր ծուխը պէտք է 4 ռ. 35 կոպէկից աւելի վճարէ, իսկ վատ պայմաններում գտնվողները պէտք է այդ գումարից քիչ վճարեն. բայց և այնպէս գաւառի 6212 ծուխը՝ հաշուելով միջին թւով 4 ռ. 35 կ., ընդամենը տարեկան պէտք է վճարէ, ինչպէս ասեցինք, 27,022 ռուբլի։

Սալլիմեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, յունվարի 14-ին, Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան օրը, Վանքի մայր եկեղեցում մատուցվեց պատարագ։ Կաթողիկոսը խօսեց հաւատաւոր ճառ։ Պատարագից յետոյ առաջնորդարանում ներկայացան Կաթողիկոսին կոմէնդանտ Ռէյտէր, Ներսիսեան դպրոցի հոգաբարձուները, ուսուցչական խումբը և մասնաւոր անձինք։

—

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը, մանրամասնաբար քննելով ուսուցչական թոշակարկղի ծրագիրը, որ մշակել էր Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, մտցրեց մի քանի փոփոխութիւններ և հաստատեց նրան։ Թոշակարկղի կանոնադրութեան գլխաւոր կէտերի հետ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին։ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր կողմից որոշել է օգնել թոշակարկղին, յատկացնելով տասնհինգ տարվայ ընթացքում տարեկան 3,000 ռուբլի տպաստ, որպէս զի կազմվի հիմնադրամ և թոշակարկղը կարողանայ գործել աջող կերպով։ Հոգաբարձութիւնը յոյս ունի, որ թոշակարկղին կօգնեն և մասնաւոր բարերարներ, նուիրելով խոշոր գումարներ։

—

Մենք յայտնել էինք, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը որոշել է բանալ երկրագործական գործիքների պահեստ, որպէս զի կարողանայ էժան գնով գործիքներ տալ մեր հողագործներին։ Ընկերութիւնը դիմել էր Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրելով Ալէքսանդրեան այգու այն նեղ տարածութիւնը, որ գտնվում է ընկերութեան շինութեան առաջ, յատկացնել այդ պահեստի համար։ Մեզ հաղորդում են, որ թէ քաղաքային վարչութիւնը և թէ այգէ-անտառային յանձնաժողովը հաւանութիւն տուին ընկերութեան խնդիրքին և այժմ մնում է ստանալ գումարի հաւանութիւնը։

—

Տասնեակ տարիներից ի վեր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը զբաղված է Գարակեօղեան կտակի խնդրով։ Խնդրի էութիւնն այն է, որ պոլսեցի վաճառական Տիգրան Գարակեօղեան, մեռնելով անզաւակ, կտակել է իր բաժին հարստութիւնը—80,000 օսմանեան ոսկի—ազգային պատրիարքարանին, որպէս զի վերջինս այդ գումարը գործադրի զանազան ազգային—կրթական և բարեգործական հաստատութիւններ հիմնարկելու։ Սակայն հանգուցեալի միւս եղբայրները—Կարապետ և Գրիգոր Գարակեօղեանները—առարկութիւն հանելով կտակի դէմ, թէ իբր նա համաձայն չէ չէրիաթի պատուիրած ձևականութեան, մերժեցին յանձնել պատրիարքարանին գումարը և առաջարկեցին հաշուութեամբ վերջացնել գործը պատրիարքարանի հետ։ Նախկին պատրիարքները—Ներսէս, Յարութիւն, Իզմիրլեան աշխատում էին օրինական կարգով ստիպել Գարակեօղեաններին կատարել իրանց եղբօր կամքը կամ գոնէ ստանալ գումարի կէսը, իսկ գումարը, տարիների ընթացքում աճելով, դարձել էր մօտ 150,000 ոսկի։ Միւս կողմից Գարակեօղեանի եղբայրները ամեն միջոց գործ էին դնում քիչ վճարելու և, վերջապէս, ներկայ պատրիարք Օրմանեանի օրով նրանց աջողվեց մի չատ էնչին գումարով հաշուութիւն կայացնել, այն է 20,000 ոսկով։ Այդ գումարն ևս Գարակեօղեանները վճարում են ոչ թէ իբրև պարտք, այլ իբրև նուէր, այն ևս ապառիկ, մուրհակ տալով։ Կ. Պոլսի հայ մամուլը, գլխաւորապէս «Մասիս» լրագիրը, որքան թոյլ էին տալիս հանգամանքները, բողոքեց այդ անարդար հաշուութեան դէմ. մի քանի հայ իրաւագէտներ նոյն իսկ դիմեցին թիւրքաց դատարաններին և իբրև հայ ազգի անդամ, դատ սկսեցին պատրիարքարանի դէմ, բայց վերջինս կարողացաւ խեղդել բողոքողների ձայնը և 20,000 ոսկու «իրաւախոհական հաշուութիւնը» իրագործվեց ու կտակը պատրիարքարանի կողմից վերադարձվեց Գարակեօղեաններին։ Տեսնենք, գոնէ 20,000 ոսկին իր ժամանակին կը վճարվի։

—

Ղազախի գաւառի Քրդեվան գիւղի օգտին դարձեալ ստացանք Գրօզնիից, Ց. Յովհաննիսեանի միջոցով, տասն ռուբլի, որ նախկին վաթսուն և վեց ռուբլու հետ միասին կազմում է 76 ռուբլի։ Այդ գումարը ուղարկեցինք Մ. քահանայ Եղիլեանցին՝ յանձնելու Քրդեվան գիւղի կարօտ գիւղացիներին։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ յունվարի 17-ին, կիրակի, ժամը 2-ին կէսօրից յետոյ, Թիֆլիսի նահանգական դատարանում կը կայանայ կովկասեան Իրաւագիտական ընկերութեան ժողովը, որ պէտք է զբաղվի պաշտօնատար անձանց ընտրութեամբ 1899 տարվայ համար։

—

Քաղաքացիական նոր օրէնսդրութիւնը կազմող խմբագրական յանձնաժողովը այս օրերս ներկայացրեց պետական խորհրդի քննութեան հեղինակի իրաւունքները որոշող կանոնների ծրագիրը։ Այդ ծրագրված կանոնները անխախտ են թողնում հեղինակի ժառանգների վայելած նախկին յիսնամեայ իրաւունքը, այնպէս որ նոր օրէնսդրութեամբ ևս հեղինակի մահից միայն 50 տարի յետոյ նրա գրուածքները դառնում են հասարակաց սեփականութիւն։ Անխախտ է պահպանվում և արտասահմանեան հեղինակների գրուածքների թարգմանութեան ազատութիւնը, այսինքն ամեն մարդ Ռուսաստանում իրաւունք ունի թարգմանել օտարերկրացի որ և է գրողի աշխատութիւն, առանց նրանից թոյլտուութիւն ձեռք բերելու։ Բայց հեղինակներին Ռուսաստանում տրվում է մի նոր իրաւունք, որն այժմ նրանք չեն վայելում—իրանց երկասիրութիւնները թարգմանելու բացառիկ իրաւունքը միայն 10 տարվայ ընթացքում։ Արգելվում է օտար գրուածքների արտատպութիւնը, բայց երաժշտական գրուածքներից։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Յունվարի 8-ին «Որսորդական կլուբում» կայացաւ Կովկասին քաջ յայտնի պ. Կարա-Մուրզայի կօնցէրտը։ Պ. Կարա-Մուրզա շատ կարճ ժամանակում սիրողներից երգեցիկ խումբ կազմեց։ Ամենայն սիրով հաճաձայնվեցին մասնակցել տեղացի հայ օրիորդները, ուսանողները, երիտասարդները. կային մի երկու ռուս օրիորդներ ևս։ Ընդամենը խումբում կար 70 հոգի։ Կօնցէրտի ծրագիրը շատ հետաքրքիր էր, կազմված էր բացառապէս հայկական, գլխաւորապէս զուտ ժողովրդական երգերից։ Ամենից առաջ երգեցին «Մեր հայրենիքը», վերջում «Զէյթը». ի թիւս այլ երգերի կային՝ «Բամբ որոտան», «Հէրիք որդեակք», «Ալագիազ բարձր սար է», «Ես լսեցի մի անուշ ձայն», «Եօթն օր և եօթ գիշեր», «Համեստ աղջիկ լինիմ մի տանջիր»։ Կային և սոլիստներ՝ օր Ջանումեանց, և պ.պ. Վարդիկեան ու Ջանբաբեան։ Առհասարակ կօնցէրտը մեծ աջողութիւն ունեցաւ։ Շատ քիչ բացառութեամբ, բոլոր երգերը կրկնել տուին։ Առանձին ուշադրութեան արժանացան օր. Ջանումեանցի երգած «Ես լսեցի մի անուշ ձայնը» և պ. Ն. Վարդիկեանցի «Եօթն օր եօթ գիշերը»։ Երկուսն էլ արժանացան բուռն ծափահարութիւնների։ Դահլիճում մեծ կենդանութիւն էր տիրում. բաւականաչափ հայեր կային։ Հասարակութիւնը յայտնեց իր համակրութիւնը պ. Կարա-Մուրզային և խմբին։ Թէ կօնցէրտի ժամանակ և թէ յետոյ նուէրներ ստացան օր. Ջանումեանց և ինքն պ. Կարա-Մուրզան։ Ինչպէս լսեցինք, պ. Կարա-Մուրզայի խումբը մտադիր է մի քանի կօնցէրտներ տալ։ Աջողութիւն ենք ցանկանում և կարծում ենք, որ տեղիս հայ հասարակութիւնը չի զլանայ ապագայում ևս յայտնել իր բուռն համակրութիւնը թէ պ. Կարա-Մուրզային և թէ նրա պատրաստած խմբին»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մշակի» անցեալ տարվայ 222 համարում հաղորդված էր մեր գաւառի Գեօնդուրա գիւղի բնակիչ Պապիկ Սուքիասեանի կախարդական կերպով աճող պարքի մասին, որ նա տալու էր տեղական մի վանքառուի։ Հիմա ուրախութեամբ լսում ենք, որ այդ առիթով տեղական պրիստաւը քննութիւն է սկսել։ Վանքառուն այժմ պատրաստ է պարտամուրհակը պատռել, միայն թէ գլուխն ազատէ։ Ուրեմն յոյս կայ, որ այդ մի զոհը ազատվի։ Շատ զոհեր կազատվէին, եթէ կարելի լիներ լոյս սփռել բոլորի վրա։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Պօստոն, դեկտեմբերի 30-ին

Ճակատագրի դառն հեգնութեամբ, 30 երկար տարիներու անընդհատ կռիւներու հերոսը, պատերազմի մէջ ծերացած զօրավար Կարսիան, դեռ իր սիրած հայրենիքին հագիւ տեսած ազատութեան արշալոյսը՝ իր աչքերը փակեց աշխարհի լոյսին։ Շատ ծանր է Քուպայի կորուստը. ողբացին հայրենասէրները իրենց խժասուն և անձնուէր առաջնորդի անակնկալ մահը։ Նա, թէև ծերմով ծերացած, բայց հոգով երիտասարդ ու աշխոյժ, դեռ շատ մեծ ծառայութիւններ պիտի մատուցանէր այն երկրին, որուն նուիրեր էր իր ամբողջ կեանքը։ Քուպայի հայրենասէրներու մէջ չը կար իրեն նման վստահելի և ժողովրդական անձ մը, որ կարող լինէր ամենուն հաճակրանքը և յարգանքը դրաւել։ Տարակոյս չը կայ, կըսեն, որ նա առաջին նախագահը պիտի լինէր Քուպայի հասարակապետութեան, եթէ տարաժամ մահը չը կարէր անոր պատմական ընթացքը։

Սառրին, գծուծ շահերու, վաճառականական հաշիւներու, ոսկոյ աստուածութեան այս դարավերջին ինչ սփոփանք է ներշնչում մեծ հերոսին կեանքը, կեանք մը, որ պատմական մեծ դիւցազները ի յուշ կանչէ։ Տարակոյս չը կայ, թէ ապագային, երբ այսօրվան օրինաւոր ազատները, աղքատները կուլ տուող մեծափարթամ Աստօրները և Վանդերբիլտները մոռացութեան մատնվեն, քուպայի արի զօրապետին անունը պիտի յիշվի մարդկութեան հերոսներու շարքին մէջ։

Հարուստ դասակարգի զաւակ էր Կարսիան, 1836-ին աշխարհ եկած. կեանքը իրեն համար զուրկ չէր վայելքներէ, դրամի և ընկերական դիրքի շնորհած բոլոր առաւելութիւններն ու հաճոյքները պատրաստ էին երիտասարդ քուպացուն համար, սակայն այդ երիտասարդ սիրտը տարօրինակ սիրոյ մը համար կը բաբախէր. անոր սիրուհին ազատութիւնն էր, այն սիրոյն համար նա զոհեց հարստութիւն, հանգիստ և ամեն ինչ։

1868-ի Քուպայի 10 տարվան ապստամբութեան առաջնորդներէն մին էր Կարսիա։ Այդ երկար շրջանի ամենէն արիւնոտ կռիւներուն մասնակցեր է նաև իր զօրապետ, մի շարք փայլուն յաղթութիւններ տարեր է, սակայն ապստամբութիւնը տհաս էր դեռ այդ ատեն։ Ժողովուրդը դեռ անպատրաստ, յեղափոխականները պէտք եղած օգնութիւնը չէին կրնար գտնել, զէնքի և պաշարի պակասը իրենց ուժը կը ջլատէր։ Կարսիան անոնցմէ էր, որ մինչև իրենց վերջին շունչը կուռեցան։ Վերջին ճակատամարտին միայն քսան ընկերներով 400 սպանիացիներէ պաշարված՝ որոշեցին որքան կարելի է սուղ ծախել իրենց կեանքը. երիտասարդ զինուորականը երբ տեսաւ թէ ողջ բռնվելու վտանգին մէջ է, սոսկալով սպանիական չարչարանքներէն՝ իր ատրճանակը կրակեց դունչին տակէն, գնտակը դուրս եկաւ ճակատէն։ Իբրև մեռած փոխադրեցին կռիւի դաշտէն, բայց հրաշքով ողջացաւ. իր այդ վտանգաւոր վէրքին սպին նա կը կրէր մինչև վերջը իր ճակտին վրա։ Երիտասարդ հայրենասէրը չաղատվեցաւ սակայն սպանիացւոց ձեռքէն, նաւով իբր պատերազմի գերի Սպանիա տարվեցաւ, ուր մնաց մինչև 1878, որ ատեն խաղաղութիւն հաստատվելով ազատ արձակվեցաւ։ Կարսիան ժամանակ չը կորսնցուց, Քուպա դարձաւ, 1879-ին ուրիշ ապստամբութիւն մը հանեց, բայց այդ ալ շատ ձախող արդիւնք ունեցաւ. քուպացիք կորուստ մի քանի մեծ հայրենասէրներ կռիւի մը մէջ և Կարսիան ալ գերի բռնվելով երկրորդ անգամ Սպանիա փոխադրվեցաւ։

Հայրենասէր քուպացին համբաւը այնքան մեծ էր և իր անձնական քաջութիւնը նոյն իսկ թշնամիներուն այնքան յարգանք ներշնչեր էր, որ իր թոյլ կազմին և առողջութիւնը խանգարվելուն պատճառաւ, շատով բանտէն հանեցին։ Պանքայի մը մէջ զորք մը տուին իրեն. քիչ վերջը անգլիերէնի և ֆրանսերէնի դասեր տալով իր աղքատացած ընտանիքը կը պահէր։ Այս բոլոր միջոցին ոստիկանական խիստ հսկողութեան տակ էր, բայց քանի որ իր առողջութիւնը երթալով կը լանդարվէր, սպանիացիք սկսան վնիքը մոռնալ. 1895-ի դիշեր մը Կարսիա փախաւ Մադրիդէն, յաջողեցաւ հասնել Ֆրանսիա, ուսկից փութաց Ամերիկայի Միացեալ-Նահանգները։ Յեղափոխութեան դրօշակը բարձրացած էր Քուպայի մէջ և ծերունի զօրավարը կանձկար կրկին կուզեր այդ դրօշին տակ իր հայրենեաց թշնամիներու դէմ։ Միացեալ-Նահանգաց կառավարութեան խստութեան շնորհիւ մի քանի փորձեր անյաջող անցան. բայց քուպացին վերջապէս կրցաւ մեծ քանակութեամբ ռազմամթերով ցամաք ելնել իր կղզին։

Կարսիա յաջողեց տարաբախտ Մասէօյի։ 15000 զօրքերով կարևոր կէտեր գրաւեց, մինչև ամերիկեան արշաւանքը հասաւ Սանթիակո. այդ քաղաքի գրաւման միջոցին քուպացի զօրապետին մատուցած օգնութիւնը և ցոյց տուած ճարտարութիւնը և քաջութիւնը դեռ երկկի պատմութիւն է։

Քուպացիներու պատգամաւորութիւն մը եկաւ Ուաշինկթըն. ծերունի զօրապետը այդ պատգամաւորներու նախագահն էր. հայրենասէրները կուզային իրենց աղատարարներու հետ իրենց կղզին՝ Կուբայի ապագային վրա խորհրդակցելու։ Այդ աշխատութեանց միջոցին էր, որ հիւսիսի ցուրտ քամի մը հնաւուրց պատերազմիկը անկողին ձգեց։ Թնդանօթներէ, բանակներէ, սպանիացոց հաւատաքննական չարչարանքներէ չը վախցող մարդը անօգնական էր հիւանդութեան մը դէմ։ Վսեմ էին սակայն հայրենասէրին վերջին վայրկեանները. մահվան քրտինքը ճակտին ինքզինքը կռիւի դաշտը կը կարծէր. անկողնէն դուրս նետած բազուկները, աջով սուրը սեղմած՝ հրամաններու կորոտար, յառաջ զինուորներ կը կրկնէր. պատերազմի երաշներով մեռաւ պատերազմի որդին։

Մարդասպան ճիւաղ մը չէր հայրենասէր քուպացին. զինք մօտէն ճանչցողները իր պինորական տաղանդէն աւելի կը հիանան իր մտքի և գաղափարներու բարձրութեան, սրտի ազնուութեան, իր բարոյականի սրբութեան և մարդասիրութեան վրա։ Կրթված մարդ մ'էր զօրապետը, ծանօթ ժամանակակից մեծ հարցերուն, կրօնապէս ազատախոհ, մասոն մ'էր արտաքսված հռովմէական եկեղեցիէն, բայց ինչպէս կըսէ իր ընկերներէն մին իր կրօնը, որ բարի լինել և բարի գործել էր, ամեն կրօնքէ վեր էր։ Ուրիշ մը քանի մը բառով կը բնութագրէ իր կեանքը. «Կարսիայի երկինքը իր ընտանիքն էր, հաւատքը՝ ազատ Քուպան և սեղանը ազատութիւնը, որուն վրա զոհեց և իր կեանքը։

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Աթէնքից ստացված տեղեկութիւնների համեմատ, արքայորդի Դէօրգի հրաւէր կարդաց Կանդիայի ժամեղականներին հեռաւոր քրիստոնեաների այն տներից, որ նրանք գրաւել էին, և վերադառնալ իրանց գիւղերը։ Բայց արքայորդիի այդ հրաւէրը շատ քիչ աջողութիւն ունեցաւ։ Մահմեդականներից շատերը յայտնեցին, որ իրանք աւելի լաւ կը հաւարեն դաղթել, քան դնալ և վերաբնակվել իրանց քանդված գիւղերում։ Մի քանի բէգեր արդէն հեռագրով դիմեցին մեծ վեզիրին և խնդրեցին ուղարկել երկու փոխադրող նաւեր դաղթող ժամեմականների համար։

—Նախագահ Մակ-Կինլէյ պրոֆէսոր Եորչեսէրին Ֆիլիպեան յանձնաժողովի նախագահ նշանակեց։ Այդ յանձնաժողովը պէտք է ուսումնասիրէ ազգաբնակութեան բարքերը և սովորութիւնները, նոյնպէս և երկրի նիւթական միջոցները և նրա առևտրական ապագան։

—Կ. Պոլսից գրում են. «С. Петерб. Вѣдомости» լրագրին, որ Եղրզ-Ֆիսսկում սաստիկ մեծ յուզումնք է առաջ բերել այն լուրը, թէ Կրետէի մուսուլմանները դիմել են անգլիական թագուհուն և պաշտպանութիւն խնդրել։ Յուզմունք է առաջ բերել և շեյխ-ուլ-իսլամի բռնած թշնամական ընթացքը։ Այդ բոլորը ցոյց է տալիս, որ եղծվել է շարիաթի պահանջած կարգը, իսկ այդ կարգը պահանջում է, որ ժողովուրդը գոհ լինի իր խալիֆից։ Շեյխ-ուլ-իսլամը մատնացոյց է արել Եղրզ-Ֆիսսկում այն անհերքելի փաստի վրա, որ շարիաթը չէ կարող հաշտվել երկրի այժմեան վիճակի հետ և պահանջում է վերականգնել կարգը, չը խնայելով ոչ մի միջոց։ Մուսուլման հոգևորականութեան այդ ներկայացուցիչը, որ պետական գործերում ոչ պակաս դեր է խաղում, քան ինքն սուլթանը, ցոյց տուեց փաղիշահին մի քանի քաղուածքներ շարիաթից, որի հիման վրա «խալիֆը պէտք է սիրի իր ժողովրդին, ժողովուրդը պէտք է գոհ լինի իր հրամանատարից»...։ Շեյխ-ուլ-իսլամի այդպիսի համարձակ և վճռական քայլը դուր չեկաւ փաղիշահին և լուրեր են պատում, որ յարաբերութիւնները նրանց մէջ լարված են։ Զալմաւոր ծերունին չէ դադարում աշխատել և նա, հիմնվելով իր հոգևոր իրաւունքների վրա, սպառնում է յայտարարել, որ երկիրը զրկոհ է կառավարութիւնից, կամ ըստ շարիաթի «անհաղիստ է»։ Եղրզ-Ֆիսսկում շատ լաւ գիտեն, որ եթէ իսլամի յարգելի պետը իրագործի իր սպառ-

նալիքը, Թիւրքիայում անմիջապէս կը բացվի նրա պատմութեան մէջ անօրինակ մի ապստամբութիւն, ուստի և ամեն կերպ աշխատում են հանդստացնել բարկացած ծերունուն: Ի հարկէ, շատ բան պէտք չէ դնելու հաւար մուսուլման հոգևորականութեան տրամադրութիւնը. նա տեսնելով ոսկին, մոռանում է նոյն իսկ Ալլահին...»:

—Միացեալ-Նահանգների նախագահ Մակ-Կինլէյ որոշել է, որ զինուորականներից և պաշտօնեաներից կազմված մի յանձնաժողով քննէ Ֆիլիպեան կղզիների այժմեան պայմանները և ներկայացնէ մի զեկուցագիր, որի հիման վրա կարելի լինի լուծել կղզիների ապագայ կառավարութեան խնդիրը:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 13 յունվարի: Մոսկվայում ծրագրվում է նոր դպրոցական շէնքի կառուցում յաւերժացնելու Կայսր Ալէքսանդր II-ի արձանի բացումը և Նոցա Մեծութիւնների այցելութիւնը սրբազան թագադրութեան յիշատակին հիմնվող ապաստարանին: Վճռված է դպրոցը կառուցանել ճարտարապետ Դէպպէնէրի նախագծով, 600 աշակերտների համար: Դպրոցի համար տեղ ընտրված է Միուսկեան հրապարակի վրա, Աղատարար Թագաւորի թագաւորութեան 25-ամեակի յիշատակին կառուցանվող արդիւնագործական դպրոցի կողքին: Դպրոցը կառուցանվում է 300 աղջկայ և 300 տղաների համար: Իւրաքանչիւր սեռի համար կը լինի մի-մի հիմնական դասարան և երկու-երկու զուգընթացներ:

ՁԷՐԵՊՕՎԷՑ, 13 յունվարի: Դուման որոշեց յարգել Պուշկինի յիշատակը՝ բանալով քաղաքային գրադարանին կից Պուշկինեան ժողովրդական ընթերցարան, հիմնելով երկու ձրի, թէ արական և թէ իգական, կիրակնօրեայ դպրոցներ հասակաւորների համար: Դուման կը կազմի նոյնպէս մի յանձնաժողով, որը կը մշակէ ծրագիր՝ թէ ինչպէս պէտք է տօնեն աշակերտները, որոնց թիւը 12 դպրոցներում 1324 է: Մեծամասնութիւնը այն կարծիքը յայտնեց թէ պէտք է տօնել Զատկին, այն ձևով, որ կը մշակէ յանձնաժողովը:

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 13 յունվարի: Զէմստվօի պաշտօնեաները դասակարգերի համեմատ իրանց շրջանից ընտրեցին յանձնաժողովի անդամներ՝ հարցը մանրամասն քննելու համար: Իւրաքանչիւր պատգամաւորին տրվեցին Բարձրագոյն առաջարկութիւններ և մի բրոշիւր, որը, ընդհանուր-նահանգապետի հրամանով, կազմել է փոխ-զնդապետ Զէյն, պաշտօնական աղբիւրների հիման վրա: Այդ բրոշիւրի մէջ համեմատվում են զինուորագրութեան վերաբերեալ գործադրվող կանոնագրութիւնները Կայսրութեան և Ֆինլանդիայի մէջ:

ՎԻԷՆՆԱ, 13 յունվարի: Զինաւորումը սահմանափակելու կոնֆէրենցիայի պրոգրամի մէջ լրագիրները ամենից շատ ուշադրութեան արժանի են համարում առաջին և վերջին կէտերը, նկատելով, որ մնացած կէտերը կարելի է կանոնաւորել՝ գործադրելով Ժընէվի պայմանագիրը: Լրագիրները այն համոզմունքն են յայտնում, որ եթէ մինչև անդամ այդ գեղեցիկ նպատակը չիրագործվի, այնու ամենայնիւ կոնֆէրէնցիան նիւթ կը ժառակարարէ յարուցված հարցի ապագայ զարգացման համար: «Fremdenblatt» ասում է. «Եթէ կիրագործվեն պրոգրամի կէտերը 2-ից մինչև 7-րդ, դա արդէն արտակարգ առաջադիմութիւն կը լինի մարդկայնութեան մտքով: Առաջին և վերջին կէտերի վերաբերութեամբ անհրաժեշտ է նախապատրաստական քննութիւն պետութիւնների կողմից: Անհամբերութեամբ պէտք է սպասել՝ թէ պետութիւնները ինչպէս կը վերաբերվեն մանաւանդ առաջին կէտին, ուր ամենից շատ դեր կը խաղան տարբերութիւնները քաղաքական և կենսական պայմանների և հիմնարկութիւնների մէջ: Բայց եթէ մինչև անդամ կոնֆէրէնցիան անաջողութեան ժամանվի, այդ դէպքումն անդամ չի դադարի նշանակութիւն ունենալ այն փաստը, որ կոնֆէրէնցիան կազմելու հարցը յարուցեց Ռուսաց Կայսրը»: «Neue Freie Presse» լրագիրը չէ կասկածում, որ ամեն տեղ հակում է նշմարվում՝ համաձայնվել ռուսաց առաջարկութիւններին:

ՍՕՖԻԱ, 14 յունվարի: Այն լուրերը, որ իբր թէ մակեդոնական հարցի պատճառով Թիւրքիայի և Բոլգարիայի մէջ յարաբերութիւնները լարված են,—քօրսային հասարակ մի խաղ է համարվում: Բոլգարիայի և Թիւրքիայի մէջ յարաբերութիւնները շարունակվում են չափազանց բարեկամական լինել:

ՅԷՏԻՆԻԷ, 14 յունվարի: Այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, Հին Սերբիայի բոլոր ալբանական ցեղերի առաջնորդները հրաւիրված են Իպէկ: Դրանց կանչելու նպատակը յայտնի չէ:

ՊԷԿԻՆ, 14 յունվարի: Ռուսաց պաշտպան զօրաբաժնի կէսը հեռացաւ Պէկինից, այնպէս որ այժմ ռուսաց զօրաբաժնի կազմութիւնը հաւասար է օտար պետութիւնների զօրաբաժիններին:

ՊԱՐԻԶ, 14 յունվարի: «Soir» լրագիրը հաւատացնում է, որ Բօրէպէրի մատնացոյց արած դէպքերի քննութիւնը այն եզրակացութեան հասցրեց, որ դատարանի Բար և Դիւմա անդամները արժանի են կարգապահութեան հրաւիրվելու պատժին, Լէվ և Մանի—պաշտօնական յանդիմանութեան: Մինիստրների խորհուրդը վաղը կը քննի մի քանի պատգամաւորների առաջարկութիւնը՝ գործը հանել վճռաբեկ դատարանի քրէական ատեանի քննութիւնից:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վենէրական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիտի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
78—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԿԱՖԷ ԶԻԼԼԷՐ
(Café Siller)

Վիէննա, I. Laurenzerberg. Մեծ և էլեկտանտ կաֆէ, բազմաթիւ հայ և ռուս լրագիրներով. դալիս են բոլոր հայ և շատ օտարականներ: Ընտիր սուրճ և լաւ ծառայութիւն: 2—25

ԲԺԻՇԿ Յ. Յ. ԶՕԿԻԵԼՕՎԸ

Ընդունում է՝ վենէրական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝

Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:

Առանձին ընդունելութիւնը, ներքին և մորթու հիւանդութիւն ունեցողների համար՝ 12—1 ժամը: Խիմիկո-միկրոսկոպային գործողութիւն՝ խորխի, մէզի, արեան և ախտական հիւանդութիւնների: Գանովսկայա փողոց, տուն Մարգարովի, № 31: 18—20

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Եղբարք Արասխանեանցների՝ Պաստորի մեթոդով քննած որդնի սերմերը բայեազ Բաղդատ տեսակի, արժանացած մեծ արծաթեայ մեդալի՝ Կայսերական այգեգործական ընկերութեան ցուցահանդէսում:

Դիմել՝ Վերին-Ադուլիս, Եղբարք Լ. և Ի. Արասխանեանցներին, Թիֆլիսում՝ Եղբ. Մ. Մարութեանցներին: (է. հ. ո. ե. չ.) 3—5

ԲԺՇԿԱՊԵՏ Ե.Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ

մասնագէտ կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների:

Ընդունում է 5—7 ժամը երեկոյեան. Վելիամինովսկայա փողոց, տուն № 4, Դուժայի հանդէպ:
(Ե. չ. ո.) 2—30

Վաճառվում է

Հայերէն առաջին պատի ՕՐԱՑՈՒՅՑԸ 1899 թ.

ԳԻՆՆ Է 50 ԿՕՊԵԿ, ՃԱՆ. ԾԱԽՍՈՎ 65 Կ.

Բացված է բաժանորդագրութիւն

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ 1899 թ. (IV տարի)

Լոյս է տեսնում տարին 2 գիրք—յունվար 1-ին և յուլիս 1-ին: Տարեկան 3 ռուբլի:

Հրատարակիչ՝ Գիւտ ա. քահ. Աղանեանց
1—3

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱՏՈՒՐԵԱՆԻ
Բանաստեղծութիւնները
Երկրորդ հատոր
(Մօտ 225 երես, գինն է 1 ռուբ.)

Ցանկացողները պիտի դիմեն հեղինակին՝ Москва, Каретный—Садовая, меб. ком. Ивановой, № 10. (է. ո.) 5—10

Լոյս տեսաւ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱՏՈՒՐԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Երկրորդ հատոր
ԳԻՆՆ Է ՄԷԿ ՌՈՒԲԼԻ

Հեղինակի հասցէն՝ Москва, Садовая—Каретная, меб. ком. Ивановой, № 10.

Տպագրութեան համար պատրաստվում է և մինչև առաջիկայ մայիս լոյս կը տեսնի ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ խորագրով մեր աշխատութեան առաջին գրքոյկը, որի մէջ զետեղված կը լինեն բացառապէս ՊՈՒՇԿԻՆԻ բանաստեղծութիւնները: 2—5

Բժ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ՝
մասնագիտաբար քգի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններով:

Առաւօտեան 9—11 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.

Գոլովինսկի պրոսպ. № 28, տ. Աղաժովի:
3—15

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կանոնագրութեան 17 և 26 յօդուածների համաձայն, յունվարի 31-ին, կիրակի օր, երեկոյեան 7 ժամին, ընկերութեան գրադարանի դահլիճում կը կայանայ տարեկան ընդհանուր ժողով, ուր կը քննվեն ու կը հաստատվեն անցեալ 1898 թ. դրամական հաշիւները, կը քննվի ու կը հաստատվի խորհրդի կազմած նախահաշիւը ներկայ 1899 թ. համար և կը վճռվեն ընթացիկ գործեր: 1—3

ՄԱԿԱՐ ՁՄՇԿԵԱՆԻ ԿԱԶՄԱԾ
1899 թ. „ԾՈՑԻ“, „ՍԵՂԱՆԻ“, „ՊԱՏԻ“
և АРМЯНСКІЙ КАЛЕНДАРЬ
(на русскомъ языкѣ съ предсказаніями) ՕՐԱՑՈՑՆԵՐԸ: Հարուստ յաւելուածով և երաշխաւորով: Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում: 2—3



Շնորհիւ մեծ քանակութեամբ ծախվելուն և նոր, կատարելագործված միջոցով ժամացոյցներ պատրաստելուն, ես հնարաւորութիւն ունեմ այս տարվայ յունվարի 1-ից վաճառել տղամարդկանց ամենասիրուն և դիմացկուն ժամացոյցներ ամերիկական ոսկուց, որը մասնագէտներն անդամ դժուարութեամբ են որոշում իսկական թանդ արժեցող ոսկուց—ծածկված անկէր, մեխանիզմը ամենաընտիր կոնստրուկցիայի, գեղեցիկ շղթայով նոյնպէս ամերիկական ոսկուց, բրելօկով և պատուիրողի ցանկութեան համեմատ նաև վերին ծածկի վրա նրա մոնոգրամմով կամ պատկերով՝ ուղարկած լուսանկարչական պատկերի նման, փոխանակ 18 և 20 ռ.

ՄԻԱՅՆ 10 ԵՒ 12 ՌՈՒԲԼԻ

Ամերիկայում այս ժամացոյցներն արդէն վաղուց են գործածութիւնից հանել իսկական ոսկուց չինվածները, իսկ վերջին ժամանակներս ընդհանուր գործածութիւն են ստացել նաև մեզանում:

Նոյն տեսակ ժամացոյցներ կանանց համար 1 ռուբլով թանդ:

ԳՐԱՒՈՐ ԵՏԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ 6 ՏԱՐՎԱՑ ՀԱՄԱՐ

Ուղարկում եմ բոլորովին ուղղվածները՝ 2 ռուբլի նախավճար ստանալուց յետոյ, իսկ մնացածները վերադիր վճարով:

Հասցէն՝ Ш. БИТКЕРЪ

Складъ женевскихъ и американскихъ часовъ въ Варшавѣ, Сенаторская № 27 и Вербовая № 11, противъ Правительственнаго Театра.

Կեղծումների առաջն առնելու համար իւրաքանչիւր օրինակի հետ կայ ֆիրմայի պլոմբը, որը հաստատել է Առևտրի և Մանուֆակտուրայի Դեպարտամենտը, № 29593/435.
(ո) 8—12



Գիւղատնտեսական գործիքներ և մեքենաներ
Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
250 նկարով: Գինն է 50 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (Ե. ո.) 9—50

1899
ԱՐԱՐԱՏ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Բաժանորդագին է՝ Ռուսաստանում 4 ռ. Արտասահմանում 5 ռ.

Խնդրում ենք բաժանորդներին յայտնել իրանց ճիշդ հասցէները.

Հասցէն՝ Эчміадзинъ, Типографическому Комитету, по части журнала „Араратъ“. Արտասահմանի համար. Rédaction du Journal „Ararat“ Etchmiadzine (Caucase) 2—3

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Января 1899 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.